ԿԱՐԾԻՔ

Գրիշա Գագիկի Գասպարյանի

«Անգլերեն տեքստային որմնագրությունը որպես զանգվածային

հաղորդակցության մոդել» թեմայով

Ժ. 02.07 «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական

գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

վերաբերյալ

Անցյալ դարի 50-ականների սկզբից Ն. Չոմսկու խոսքերով տեղի ունեցավ «հաղորդակցական պայթյուն»: Այժմ հաղորդակցության երեք միջոցները՝ հեռուստատեսությունը, կինոն և ինտերնետը դարձել են ժամանակակից հասարակական կյանքի անբաժանելի մասը: Նրանց է միացել նաև որմնագրությունը: Հանդիսանալով գիտակցության ձևավորման ամենակարևոր գործիք՝ նրանց բոլորին միավորում է տեսողական, պատկերային բաղադրիչի առկայությունը: Սրանով է պայմանավորվում լեզվաբանական հետազոտությունների հետաքրքրության աճը վիզուալիզացիայի խնդրի նկատմամբ, այսինքն կարևորվում է տեսողական ընկալման դերը բանավոր կամ գրավոր տեքստի յուրացման մեջ: Գրիշա Գասպարյանի՝ «Անգլերեն տեքստային որմնագրությունը որպես զանգվածային հաղորդակցության մոդել» թեմայով ատենախոսությունը առանձնահատուկ և արժեքավոր աշխատանք է հենց այն պատճառով, որ հեղինակի մոտեցումը որմնագրությանը որպես զանգվածային հաղորդակցության մոդելի, արդիական է, բարձրացված հարցերի և խնդիրների առումով՝ օգտակար, տեսագործնական առումով՝ կիրառելի, իսկ հետազոտման նյութի ընտրության տեսակետից՝ բովանդակալից և բազմազան:

Իր ուսումնասիրության մեջ ատենախոսը նպատակ է ունեցել դիտարկել անգլերեն տեքստային որմնագրությունը ձևավորող լեզվական և արտալեզվական միջոցները և կառուցել որմնագրային հաղորդակցության մոդելը: Այս նպատակին հասնելու համար

ատենախոսության հեղինակն իր առջև դրել է որոշակի հետազոտական խնդիրներ, ինչպես օրինակ՝ քննության ենթարկել որմնագրային խոսույթը ըստ լեզվի գործառույթների տեսության, Արիստոտելի կողմից առաջադրած համոզման ռազմավարությունների և խոսույթի քննադատական վերլուծության տեսանկյունից, որոնք էլ որ պատշաճ իրականացրել է աշխատանքի ընթացքում:

Իր ուսումնասիրության համար հեղինակն ընտրել է ժամանակակից լեզվաբանության մեջ առավել արդյունավետ համարվող մեթոդները՝ համատեքստային վերլուծության, խոսույթի քննադատական և բազմաեղանակային վերլուծության մեթոդները:

Ներկայացված ատենախոսությունը խիստ արդիական է՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ժամանակակից աշխարհում, որմնագրության լայն տարածում ստանալուն զուգահեռ, կա անհրաժեշտություն այն դիտարկելու առաջին հերթին որպես հաղորդակցության միջոց, որը տեղի է ունենում որոշակի հաղորդակցական մոդելում:

Գրախոսվող ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է այն հանգամանքով, որ առաջին անգամ է փորձ արվում իմաստագործաբանական քննության ենթարկել անգլալեզու որմնագրային տեքստերը որքան հնարավոր է համապարփակ ձևով՝ առանց սահմանափակելու որմնագրության առանձին նմուշների ուսումնասիրությունը որևէ սոցիալական կամ ֆիզիկական համատեքստով: Ուսումնասիրության նմանօրինակ ելակետ ընտրելով՝ ատենախոսին հաջողվում է վեր հանել որմնագրային խոսույթը ձևավորող իմաստաստեղծման միջոցները, կառուցել հաղորդակցական այն մոդելը, որն առաջանում է, երբ որմնագրությունն օգտագործվում է անհատների կողմից որպես այլ մարդկանց սեփական մտքերին հաղորդակից դարձնելու միջոց:

Աշխատանքը տեսական և գործնական կարևոր նշանակություն ունի ժամանակակից լեզվաբանության տարբեր ճյուղերի, ինչպես օրինակ՝ իմաստաբանության, գործաբանական լեզվաբանության, հաղորդակցության տեսության, տեքստի լեզվաբանության, գործառական ոճագիտության ոլորտներում իրականացվող հետազոտությունների համար և կարող է նպաստել որմնագրության քննությանը նվիրված ուսումնասիրություններին:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության հարուստ ցանկից:

Ատենախոսության առաջին գլխում հեղինակն ուսումնասիրում է «որմնագրություն» հասկացության վերաբերյալ ամենատարբեր մոտեցումներն ու տեսությունները, վեր է հանում խոսույթը ձևավորող հաղորդակցության եղանակները, դրանց փոխկապակցվածությունը իմաստաստեղծման գործընթացում, ներկայացնում որմնագրային նմուշների ստեղծման քայլերի հաջորդականությունը, իմաստային միավորների՝ միմյանց հետ ունեցած կապերը:

Երկրորդ գլխում հեղինակը դիտարկում է որմնագրությունը լեզվի գործառույթների, Արիստոտելի առաջադրած համոզման ռազմավարությունների և խոսույթի քննադատական վերլուծության համատեքստերում: Որմնագրային խոսույթից վերցված բազմաթիվ նմուշների վերլուծության հիման վրա ատենախոսին հաջողվում է վեր հանել այն լեզվական միջոցներն ու հնարները, որոնք առանցքային դեր են խաղում որմնագրային խոսույթի իմաստաստեղծման գործընթացում և որմնագրային տեքստը դարձնում առավել համոզիչ ու վստահելի:

Ատենախոսության երրորդ գլխում հեղինակը ցույց է տալիս որմնագրության միջոցով ձևավորվող հաղորդակցական մոդելի բաղադրիչ տարրերի առանձնահատկությունները և կառուցում որմնագրային հաղորդկացության մոդելը՝ գծային, երկխոսական և գործարքային փոփոխություններով:

Ներկայացված ատենախոսությունն աչքի է ընկնում ուշագրավ տեսական հարցադրումներով, վերլուծված նյութի ու տեսական եզրահանգումների հագեցվածությամբ ու հետևողականությամբ: Ատենախոսը քաջատեղյակ է ուսումնասիրվող փաստական նյութին: Նրան լիովին հաջողվել է կատարել քննություն, որը նպաստում է վերջինիս համարժեք ընկալմանն ու մեկնությանը: Եզրակացության մեջ ատենախոսը հիմնավորում է առաջ քաշված խնդիրները և ամփոփում կատարված ուսումնասիրության արդյունքները:

Ընդհանուր բնութագրմամբ մեր առջև մի բովանդակալից և շնորհալի աշխատանք է, որն առանձնանում է հետազոտողի նպատակաուղղվածությամբ և նյութի անհրաժեշտ իրազեկությամբ: Աշխատանքն աչքի է ընկնում թեմայի թարմությամբ, կուռ կառուցվածքով

և տրամաբանական վերլուծություններով: Բարձր գնահատելով ատենախոսի կատարած աշխատանքը՝ կցանկանայինք ստանալ որոշ հարցերի պարզաբանումներ:

1. Հեղինակը որմնագրությունը դիտարկում է որպես տեքստ, խոսույթ և հաղորդակցություն: Լեզվաբանության մեջ այս երեք հասկացություններից մեկին բնորոշ առանձնահատկությունները պարբերաբար ներթափանցում են մեկ այլ հասկացության մեջ: Իմիջիայլոց, կա տեսակետ, համաձայն որի տեքստ, խոսույթ, հաղորդակցություն եզրույթները նույնացվում են: Կցանկանայինք, որ ատենախոսը պարզաբաներ աշխատանքում այս երեք հասկացությունների ընկալումն ու կիրառումը:

2. Տեքստի հեղինակի գաղափարը աշխատանքում և՛ կարևորվում է և՛ ոչ: Կուզենայինք պարզել՝ որքանով է կարևոր հեղինակի դերը որմնագրության ստեղծման մեջ, չէ՞ որ հեղինակի անհատական արժեքային համակարգով, ինչպես նաև տարիքով, սեռով կարող են պայմանավորված լինել տվյալ որմնագրության առանձնահատկությունները:

3. Բանավոր, վերբալ տեքստից դեպի տեսողական, պատկերավոր շարժումը բացահայտում է հաղորդակցության տարբեր բաղադրիչների դերը, վեր հանում դրանց ինտեգրման մեխանիզմները, որոնք թույլ են տալիս համեմատել տեսողական տեղեկատվության ազդեցության դերը բանավոր տեքստում: Կցանկանայինք առավել հստակ իմանալ՝ ո՞ր տեսակը որմնագրությունում ունի առավել հուժկու ներուժ: Աշխատանքում կարծես գերիշխում են որմնագրության վերբալ դրսևորումներով օրինակները:

4. Որմնագրությունը հաճախ դիտարկվում է որպես վանդալիզմ, ընդգծված բացասական ենթատեքստով, ինչո՞վ է պայմանավորված հեղինակի կողմից հիմնականում դրա անտեսումը:

5. Հեղինակը, կատարելով գործաբանական վերլուծություն ինչու՞ չի դիտարկել Ջոն Օսթինի խոսքային ակտերի տեսությունը, համաձայն որի նպատակադրումն և ազդեցությունը խոսքի անքակտելի հատկանիշներն են:

Վերը նշված նկատառումները ամենևին չեն նվազեցնում կատարված հետազոտության արժանիքները: Գրիշա Գագիկի Գասպարյանի ատենախոսությունը բավարարում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջները և հեղինակն արժանի է իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին: Մեղմագիրն իր կառուցվածքով և բովանդակությամբ համապատասխանում

է ատենախոսությանը: Հեղինակի տպագիր հոդվածները արտացոլում են ատենախոսության բովանդակությունը:

Վերոնշվածը թույլ է տալիս միջնորդել ԵՊՀ գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի առաջ՝ Գրիշա Գագիկի Գասպարյանին շնորհելու բանասիրական գիտությունների թեկնածուի հայցվող աստիճանը Ժ.02.07 «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտության գծով:

Ռուս-Հայկական (Սլավոնական)
համալսարանի լեզվի տեսության և
միջմշակութային հաղորդակցության
ամբիոնի վարիչ,
բ.գ.դ., պրոֆեսոր՝ Ա.Ա.Սիմոնյան

Հաստատում եմ՝ հունվարի 31, 2023 թ.
Գիտքարտուղար,
բ.գ.թ.՝ Ռ.Ս. Կասաբաբովա